Տ. ՄՈՒՇԵՂ ԱԲԵՂԱ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(21 հոկտեմբերի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Ճշմարիտ Աստված և Հայր ողորմած, գոհանում ենք Քեզանից, որ մեր երանելի նահապետներից ավելի մեր՝ պարտավորներիս բնությունն առավել մեծարեցիր:

Քանզի նրանց համար իսկ մեզ գթալով, Աստված, մեզ համար հաճեցիր Հայր անվանվել: Ու այժմ, Տեր, աղաչում ենք Քեզ, Քո կողմից տրված այս նոր և պատվական անվանադրության շնորհը օրըստօրե պայծառացնելով ծաղկեցրու Քո սուրբ Եկեղեցում»:

(Պատարագամատույց)

Սիրելի հավատացյալներ,

Այս խոսքերը, որին ունկնդիր եղաք, պատարագիչ հոգևորականն ամեն անգամ պատարագելիս իր և ձեր փոխարեն գաղտնապես ուղղում է Աստծուն՝ ճշմարիտ Աստծուն և ողորմած Հորը, իր գոհությունը հայտնելով իբրև արարած, իբրև Նրա պատկերն ու նմանողությունը եղող մարդ, որով նա տարբերվում է բոլոր արարածներից: Եվ ամեն անգամ ասում է. «Հայր գթած, շնորհակալություն Քեզ այս մեծ պատվի համար»:

Շատերիդ քաջ հայտնի է այն աղոթքը, որ ուսուցանեց մեզ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս: Եվ յուրաքանչյուրդ, վստահաբար, այս աղոթքով եք սկսում ձեր օրը, այն աղոթքով, որի մեջ առաջին բառը Հայր է: Որպես քրիստոնյա այսպես կոչելով Աստծուն, որին երբեք չենք տեսել, Նրան մի բնորոշմամբ ենք դիմում, կոչում ենք Հայր, ինչպես դիմում ենք մեր ամենահարազատ անձնավորություններից մեկին՝ մեր մարմնավոր հորը, մեզ կյանք պարգևողին: Առավել մեծ պատիվ մեր հայրերը, ովքեր որ Պատարագի սրբազան արարողությունն են հորինել, կարծում եմ, չեն տեսել, և ավելի մեծ զգացում, քան այն սերը, որ որդին իր հոր հանդեպ է տածում և արտահայտում այն բառի մեջ, որ կոչվում է Հայր: Մեկ այլ խոսք չէր կարող ավելի լավ արտահայտել Ողորմած Հայր և աղոթող զավակ հարաբերության ամբողջ խորությունը: Աշխարհի քրիստոնյաները և այստեղ հավաքված այս բազմությունը մեկ անձնավորություն, քրիստոնյա լինելով, մկրտված Ամենասուրբ Երրորդության անունով,

սակայն տարբեր անհատներ, ինչպես կարող են մեկ անտեսանելի էակի կոչել Հայր: Բազում անգամ, անշուշտ, այս հարցը ինքներդ ձեզ տվել եք և բազում անգամ գտել եք նրա պատասխանը աղոթքի մեջ, ծնրադրությամբ կամ էլ տեսիլքով կամ էլ որևէ հոգևորականի կամ մտերիմ մարդու բացատրությամբ: Անշուշտ, ձեր լսած բոլոր բացատրություններում ասվել է, որ քրիստոնյա ենք և քրիստոնյա լինելով ու մկրտությամբ է, որ շնորհն է տրվում Աստծուն Հայր կոչելու: Մկրտված ամեն անձնավորություն, ով հիշում է իր մկրտության արարողությունը կամ էլ ում պատմել են նրա ծնողներն ու կնքահայրը, կասի՝ գիտեմ, որ մկրտության ժամանակ նրանց ասել են, որ դա Երկնավոր Հորը որդեգրության համար է: Երկնավո՛ր Հոր որդեգրության համար, քանզի բոլորս էլ ունենք հայրեր, և ձեզնից շատերն էլ հայրեր են, սակայն մենք բոլորս մեկ հոր՝ երկնավոր Հոր զավակներ ենք, որ Իր աներևույթ ներկայությամբ պատել է այստեղ, այս սուրբ Տաճարը և քննում ու նայում է մեր բոլորի հոգիները: Ծնող ու զավակ հարաբերության մեջ շատերս չենք համարձակվում մեր ծնողի աչքերին նայելով խոսել, քանի որ ամաչում և երկյուղում ենք նրանից: Շատերս մեր հոր հետ խոսելիս հարգանքով ենք խոսում, որովհետև արժանի ենք համարում նրան հարգել, քանզի զավակն ենք նրա, նա մեզ կյանք է պարգևել: Մարդկային այս նկատելի հարաբերությունից դուրս, որքան ևս առավել մեր Երկնավոր Հոր հանդեպ մեր հարաբերության մեջ մենք պետք է հարգանքով, երկյուղածությամբ լինենք, որովհետև նա մեր ամենքի Հայրն է և որդեգրել է մեզ մկրտությամբ:

Այսօրվա ընթերցման մեջ Պողոս առաքյալը երբ գաղատացիներին բացատրում է օրենքի և օրենքի պարտադրած ինչ-ինչ ծիսական ավանդույթների տարբերությունը, ասում է, որ մենք բոլորս էլ երեխաներ ենք և երեխան չի տարբերվում ծառայից, մինչև որ մեծանա: Սիրելինե՛ր, ծառայության մի քանի կերպեր կան, նա, ով ստրուկ է, նա, ով ծառա է և նա, ով որդի է: Ստրուկը վախից է ծառայում, ծառան՝ ինչ-որ մի բանի ակնկալիքով, իսկ որդին երբևէ հարցադրում չի անում՝ ինչու համար պետք է ծառայեմ կամ էլ որևէ ակնկալիք չունի, այլ սիրով և հնազանդությամբ է նա ծառայություն բերում: Եվ Պողոս առաքյալը համեմատության մեջ է դնում ծառային և այն երեխային, որ դեռ հասուն չէ, երբ ժառանգ լինելով դեռ ժառանգորդը չէ: Որովհետև, ինչպես ասացինք, ակնկալիք ունի միայն ծառան, նա ակնկալիք ունի վարձահատույց լինելու, նյութական վարձատրություն ունենալու, սակայն զավակը, որ խոնարհությամբ ծառայում է իր հորը, որևէ ակնկալիք չունի, նրա ակնկալությունը, եթե կարելի է այսպես ասել, իր ծնողի սերն է առավելությամբ տրված նրան:

Սեր. քանիցս խոսեցինք այս զգացումի մասին, որ յուրաքանչյուր ընտանիքի և յուրաքանչյուր մարդ և ծնող ու որդի հարաբերության հիմն է կազմում: Այս է այն պատվիրանը, որ մեր երկնավոր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ուղղեց բոլորիս. «Սիրեցեք միմյանց» և Իր իսկ կյանքով Նա օրինակը դարձավ, Նրա ամբողջ վարդապետությունը սիրո ճանապարհն էր, Նրա կյանքը երկրավոր սիրո վկայությունն էր, Նրա խաչելությունն ու մահը նոր տեսակի սիրո, զոհողություն պահանջող սիրո վկայությունն էր, իսկ հարությունը քրիստոնյայի համար այն գրավականն ու առհա-

վատչյան է, որ այդ սերը իզուր չէ, այլ այդ սիրո շնորհիվ է, որ մարդ հարություն պիտի առնի: Եվ այսօր, սիրելիներ, մենք որպես զավակներ երկնավոր Հոր, որ մեզ առավել ևս պատիվ է տրված Հայր կոչելու, քան մարդկության նախահայրերին, որոնց համար Աստված էր, մեր գոհությունն ու փառաբանությունը բարձրացնենք Աստծուն որպես զավակներ և խնդրենք, որ Իր Եկեղեցուն՝ անշունչ շինությանը շունչ տվող Իր կենդանարար հոգով, Նրա յուրաքանչյուր անդամը հանդիսացող հավատացյալներով շեն պահի, որպեսզի ձեր աղոթքների շնորհիվ կարողանանք այսօրը և վաղը, միշտ և հավիտյան մեր Գթառատ Հորը փառաբանություն վերառաքեք և ձեր խոնարհությունն ու հնազանդությունը ցույց տանք ի դեմս աշխարհի, ովքեր որ չեն ճանաչում Երկնավոր Հորը:

Թող շնորհ, սեր և խաղաղությունը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի լինի բոլորիս հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն: